Դատավորների կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման մասով հաշվետվություն

1. ԴԸԺ կարգապահական հարցերի հանձնաժողով.

Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել թվով 7 միջնորդություն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ, որից 7-ը՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքերով, 3-ը նաև դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված 7 միջնորդություններից 1-ը մերժվել է, 2 դատավորի հայտարարվել է նախազգուշացում, 3 դատավորի՝ նկատողություն, իսկ 1 դատավորի հայտարարվել է խիստ նկատողություն:

2. Արդարադատության նախարար.

Արդարադատության նախարարի կողմից Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 9 միջնորդություն, որից 9-ը՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքերով:

Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված 9 միջնորդությունների քննության արդյունքում՝ 3 միջնորդությունները մերժվել են, 2 դատավորի հայտարարվել է նկատողություն, 1 դատավորի՝ խիստ նկատողություն, 1 դատավորի լիազորությունները դադարեցվել են՝ էական կարգապահական խախտման հիմքով, իսկ 2 միջնորդությամբ որոշում չի ընդունվել օրենքով նախատեսված հիմքով:

4. Բարձրագույն դատական խորհուրդ

Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել են թվով 14 որոշումներ:

Բարձրագույն դատական խորհրդը կայացրել է որոշում Բարձրագույն դատական խորհրդի անդամ Նախշուն Տավարացյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվել է թվով 3 որոշում դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու հարցի վերաբերյալ, 2 որոշում դատավորին ազատությունից զրկելու համաձայնություն տալու հարցի վերաբերյալ և 2 որոշում լիազորությունների կասեցման վերաբերյալ:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի /նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով/ հիմքով դադարեցվել է 1 դատավորի լիազորություններ:

.